

Իհարկե, ոռոգման վրա հասարակությունը հսկայական ծախսեր է կատարել, մասնավորապես Հայաստանի ոռոգելի հողերի շուրջ կեսը ջուր է ստանում պոմպակայանների միջոցով /մեխանիկական ոռոգում/, որը գոյություն չունեւ պատմական անցյալում: Սակայն մեր խոսքը հենց այն մասին է որ ոռոգման համակարգերի գոյությունն ապահովվել է պետական միջոցներով, և այսօր անհնարին է այդ համակարգի ամբողջ ծախսերի բեռը դնել գյուղացիական տնտեսության ուսերի վրա, ոչ միայն վերջինիս տկարության պատճառով, այլև սկզբունքային նկատառումներով, ելնելով ոռոգման համակարգի երկու հատվածների /պետական և համայնքային/ կառավարման և տնտեսական գործառնությունների բնույթի սկզբունքային տարբերությունից, որի մասին արդեն խոսվել է:

Ասվածից ակնհայտորեն երկու եզրակացություն է հետևում:

- Ոռոգման ջրի վարձի քաղաքականությունը լուրջ վերանայման կարիք ունի, այն այսօր հիմնված է ծախսային գործոնի հաշվառման վրա, մինչդեռ պետք է հիմնված լիներ եկամտային արդյունավետության գործոնների հաշվառման վրա: Որպես «վերստուգիչ ցուցանիշ», պետք է ելնել հողի հարկի գործող նորմատիվներից: Ջրի վարձը 1 հեկտար ոռոգելի հողատարածության հաշվով չի կարող գերազանցել հողի հարկին:
- Առաջիկա հեռանկարում անհրաժեշտ է միացնել հողի հարկը և ջրի վարձը, այդ երկու գանձումները պետք է հանդես գան միասնական՝ հողի հարկի տեսքով: Առավել ևս, որ այսօր անշարժ գույքի կադաստրի պետական ձեռնարկություններն արդեն կիրառում են եկամտի հաշվարկը ոռոգելի և անջրդի հողերի համար առանձին: Հողը և ջուրը բնության անկրկնելի բարիքներ են: Ջուրը հողից թանկ չէ:

ԱՎԵՏԻԷ ՆԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Զորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Տարածքային միավորների զարգացման հավասարակշռվածությունը պետք է գնահատել զարգացման բազմաչափանիշային համակարգի օպտիմալ կառուցվածքի և ֆինանսատնտեսական ցուցանիշների աճի տեսանկյուններից: Հավասարակշռված զարգացումը պահանջում է ապահովել ներդրումային ռեսուրսներ, արտադրական և ֆինանսական գործընթացների փոխհամաձայնեցում՝ օգտագործելով հավասարակշռման չափանիշների կարգավորման մեխանիզմներ: Միավորների հավասարակշռված զարգացման գնահատման և կարգավորման համար օգտագործվում են հետևյալ չափանիշները.

1. Միավորման զարգացման գնահատման գլխավոր չափանիշի՝ զուտ բերված արժեքի կիրառելի մեծությունը և կապիտալի կուտակման հնարավորությունը:
2. Զարգացման հավասարակշռվածության պայմանները՝ կախված ռեսուրսաապահովումից, ներդրումային ռեսուրսների արժեքից, շահութաբերությունից և շահույթի կուտակումից:
3. Զարգացման հավասարակշռվածության աստիճաններն ըստ հավասարակշռման կառուցվածքի, եկամտի, ռիսկի և իրացվելիության:
4. Ներդրումային ռիսկի դիվերսիֆիկացումը՝ հաշվի առնելով առանձին միավորների տարածքային և ճյուղային զարգացման ուղղություններն ու իրականացման ծախսերը:

5. Հավասարակշռման համար գոտ ղրամական հոսքերի կայունությունը՝ կապված շահույթի ստեղծման հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միավորների զարգացման հավասարակշռման չափորոշիչների համակարգում անհրաժեշտ է առանձնացնել նաև այն գոտ ղրամական հոսքերը, որոնք առաջանում են արտադրական, ներդրումային և ֆինանսական գործընթացներից, ապա գնահատել գոտ ղրամական հոսքերի կայունությունը, որն անհրաժեշտ է միավորման լրացուցիչ ֆինանսավորման համար: Չուտ ղրամական հոսքերի կայունությունը կախված է զարգացման հավասարակշռվածության աստիճանից, և հակառակը՝ գոտ ղրամական հոսքերի աճը, որպես լրացուցիչ ֆինանսավորման միջոց, ծառայում է զարգացման հավասարակշռվածության ապահովման և գոտ ակտիվների աճի (ΔU) համար, ինչպես նաև դինամիկ հավասարակշռվածություն պահպանելու նպատակով: Այդ առումով ներկայացնենք այդ ցուցանիշի հաշվարկման բանաձևը:

$$\Delta U = \frac{U}{U_{q0}} \times (U_{q1} - U_{q0}) - \frac{U_d}{U_{q0}} \times (U_{q1} - U_{q0}),$$

որտեղ՝ U – ակտիվների մեծությունն է հաշվետու տարում, որոնք անմիջականորեն ներգործում են զարգացման հավասարակշռվածության վրա, մլն դրամ:

U_{q1} և U_{q0} – արտադրանքի վաճառքի կանխատեսված և փաստացի ծավալն է, մլն. դրամ:

U_d – կարճաժամկետ պարտավորությունների մեծությունն է հաշվետու ժամանակում, մլն դրամ:

Այսպիսով, գոտ ակտիվների աճը կամ ֆինանսավորման լրացուցիչ պահանջարկը (Φ_{11}), որն անհրաժեշտ է վաճառքի ծավալի ավելացման և զարգացման հավասարակշռվածության ֆինանսավորման համար, որոշվում է հետևյալ մոդելով:

$$\Phi_{11} = \Delta U_{q1} \times \left(\frac{U}{U_{q0}} - \frac{U_d}{U_{q0}} \right) - \Phi_{10} = \Delta U_{q1} \times \left(\frac{U}{U_{q0}} - \frac{U_d}{U_{q0}} \right) - (Q_2 - C_h),$$

որտեղ՝ U_{q1} – արտադրանքի վաճառքի կանխատեսված (U_{q1}) ծավալի և փաստացի (U_{q0}) ծավալի տարբերությունը, մլն դրամ:

Φ_{10} – ֆինանսավորման ծավալը՝ սեփական աղբյուրների հաշվին, մլն դրամ:

Q_2 – գոտ շահույթի կանխատեսված մեծությունը, մլն դրամ:

C_h – շահույթից կատարվող հատկացումների (սպառման ֆոնդի, սոցիալական ոլորտի և շահութահարկի) գումարը, մլն դրամ:

Բերված մոդելից հետևում են հետևյալ եզրահանգումները:

1. Հավասարակշռված զարգացման կանխատեսումը, որը ենթադրում է լրացուցիչ ֆինանսավորման միջոցով ավելացնել արտադրանքի թողարկումը և իրացումը:
2. Չուտ ակտիվների աճը, որը կապված է լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հետ:
3. Լրացուցիչ ֆինանսավորման աճը, որն ապահովվում է այն ներդրումների հաշվին, որոնք տրվում են բարձր արտադրողական սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերման համար:
4. Չուտ ղրամական հոսքերի աճը, որը գոյանում է այն ներդրումային, արտադրական և ֆինանսական գործընթացներից, որոնք կազմում են տնտեսական զարգացման հավասարակշռվածության ձևավորման հիմնական տարրերը:

Այժմ ներկայացնենք տարածքի միավորման զարգացման հավասարակշռման այն գործընթացները, որոնք արտահայտում են ղրամական ներհոսքի և արտահոսքի ուղղությունները:

Դրամական հոսքերի վերլուծության և գնահատման ցուցանիշները


Դրամական միջոցների ներհոսք	Դրամական միջոցների արտահոսք
Արտադրական գործունեության դրամական միջոցների հոսքերը	
(+) Հասույթ իրացումից	(-) դրամական վճարումներ ծառայությունների համար
(+) Չնախատեսված դրամական միջոցների մուտք	(-) Աշխատավարձի վճարման դրամական միջոցներ
(+) Դրամական մուտքեր արենդայից	(-) սոցիալական վճարումներ
(+) Մուտքեր ապահովագրական ընկերությունից	(-) Հարկային վճարումներ
(+) Այլ դրամական մուտքեր	(-) Չնախատեսված դրամական վճարումներ
(+) Շահույթ արտադրությունից	(-) վնաս արտադրությունից
(+) Ամորտիզացիա	(-) դեբիտորական պարտքերի ավելացում
(+) Դեբիտորական պարտքերի կրճատում	(-) կրեդիտորական պարտքերի կրճատում
(+) Կրեդիտորական պարտավորությունների ավելացում	(-) պաշարների ավելացում
(+) Պաշարների կրճատում	(-) հարկ շահույթից
Դրամական միջոցների հոսք ներդրումային գործունեությունից	
(+) Արտաշրջանառու ակտիվների վաճառքից մուտքեր	(-) հիմնական միջոցների ձեռքբերում
(+) Գործիքների վաճառքից մուտքեր	(-) դրամական վճարումներ գործիքների գնման համար
Դրամական միջոցների հոսք ֆինանսական գործունեությունից	
(+) Դրամական միջոցների մուտք բաժնետոմսերի վաճառքից	(-) դրամական վճարումներ բաժնետոմսերի մարման համար
(+) Դրամական մուտք փոփոխությունների թողարկումից	(-) դրամական արտահոսք կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների մարման համար

Դրամական ներհոսքերի և արտահոսքերի տարբերությունը դրական նշանով արտահայտում է մի կողմից տնտեսության հավասարակշռված զարգացման արդյունավետությունը, մյուս կողմից համարվում է այդ զարգացման ֆինանսավորման աղբյուր: Այդ առումով զուտ դրամական հոսքերը պետք է գնահատել և կանխատեսել երկարաժամկետ զարգացման արդյունավետության ապահովման տեսանկյունից: Դրամական հոսքերի ձևավորումը և արդյունավետությունը կապված են մարզերի զարգացման գնահատման չափորոշիչների ձևավորման հետ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ից երևում է, որ հիմնական նախադրյալը և չափորոշիչը հանքագործությունն է, որը տիրապետող է համարվում Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի արդյունաբերության զարգացման համար: Մյուս չափորոշիչը մշակող արդյունաբերությունն է, որը զրեթե համընդհանուր նշանակություն ունի բոլոր մարզերի համար: Էլեկտրաէներգետիկայի՝ որպես կարևոր չափորոշիչի ձևավորումը առանձնահատուկ է Արմավիրի և Կոտայքի մարզերի համար: Նշված երեք հիմնական չափորոշիչների ձևավորումը կատարվում է երկարաժամկետ ներդրումների զարգացման պայմաններում՝

Մարզերի արդյունաբերության զարգացման գնահատման չափորոշիչները՝ ըստ հանրագործության, մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգետիկայի (%)՝

Մարզեր	Ամբողջ արդյունաբերություն	այդ թվում								
		Հանրագործական արդյունաբերություն			Մշակող արդյունաբերություն			Էլեկտրաէներգետիկայի, գազի, ջրի արտադրություն		
		2004	2005	2006	2004	2005	2006	2004	2005	2006
ՀՀ, ընդամենը	100	18.1	17.4	17.6	62.9	65.1	65.0	19.0	17.5	17.4
Երևան	100	0.6	0.6	0.8	83.9	87.6	87.0	15.5	11.8	12.2
Արագածոտն	100	0.7	1.1	3.6	82.0	82.8	75.9	17.3	16.1	22.5
Արարատ	100	0.3	0.3	0.9	90.9	89.6	87.3	8.8	10.1	11.8
Արմավիր	100	0.1	0.0	-	34.9	37.4	34.3	65.0	62.6	65.7
Գեղարքունիք	100	61.6	41.3	27.6	27.4	41.3	49.9	11.0	17.4	22.5
Լոռի	100	3.1	2.3	2.9	88.7	82.6	87.7	8.2	8.1	9.4
Կոտայք	100	2.5	1.6	1.6	50.3	52.9	58.8	47.2	45.5	39.6
Շիրակ	100	3.5	2.0	1.5	71.2	73.3	73.7	25.3	24.7	-----
Սյունիք	100	90.2	85.4	85.8	4.5	3.9	4.2	5.3	10.7	14.0
Վայոց Ձոր	100	0.1	0.1	0.5	75.7	75.9	77.3	24.2	24.0	22.2
Տավուշ	100	1.7	2.8	4.5	80.9	78.4	68.2	17.4	18.8	27.0



Գծանկար 1. Մարզի զարգացման գնահատման ցուցանիշների համակարգը:

¹ Մարզերի զարգացման այս և մյուս տվյալները վերցված են ՀՀ «Մարզերը» տարեգրքից:

Գծապատկեր 1-ից դժվար չէ պատկերացնել, թե բերված ցուցանիշներից յուրաքանչյուրն ինչպես է մասնակցում զարգացման հավասարակշռվածությանը և ինչ տեղ է գրավում դրա ձևավորման համակարգում: Այդ հարցերին պատասխանելու համար միավորման հավասարակշռված զարգացումը դիտարկենք դրա վրա ներդրումային միջոցների և զուտ դրամական հոսքերի ներգործության տեսանկյուններից: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ զարգացման հավասարակշռվածությունը պետք է ապահովի ներդրումային միջոցների ետգնում՝ ի հաշիվ զուտ դրամական հոսքերի: Այդ առումով անցկացնենք զուտ դրամական հոսքերի արժեքի ձևավորման հաշվարկը:

Աղյուսակ 2

Զուտ դրամական հոսքերի արժեքի որոշումը

Տարիներ	Սկզբնական ներդրումային ծախսեր (-) և զուտ դրամական հոսքեր (+-) մլն դրամ	Դիսկոնտավորման գործոնները, եթե $\epsilon=10\%$ գործ. $[1/(1+\epsilon)^t]$	Դրամական հոսքերի ընթացիկ արժեքը, մլն դրամ ($u_2 \times u_3$)	Ընթացիկ արժեքը աճողական հանրագումարով, մլն դրամ
1	2	3	4	5
0	-850.0	1.0	-850.0	-850.0
1	+160.0	0.909	+144.0	$850-144=-706$
2	+400.0	0.826	+330.0	$850-(144+330)=376$
3	+400.0	0.751	+300	$850-(144+300+309)=-76$
4	+400.0	0.683	+273	$850-(144+330+273)=+197$
5	+600.0	0.621	+373	$850-(144+330+300+273+373)=+570$

Աղյուսակ 2-ից երևում է տարածքային միավորի հավասարակշռված զարգացման տարեթիվը, երբ երրորդ տարվա վերջում դրամական հոսքերը աճում ու կազմում են $960=(160+400+400)$ և գերազանցում են սկզբնական ներդրումներից 110 մլն դրամով ($960-850$): Ներդրումային ընդհանուր ժամանակաշրջանում տարածքային միավորման զարգացման հավասարակշռվածությունը սկսվում է 4-րդ տարուց, քանի որ զուտ դրամական հոսքերի ընթացիկ արժեքը աճողական հանրագումարով կազմում է $1047=(144+330+300+273)$ մլն դրամ: Այդ տարում փոխհատուցվում են սկզբնական ներդրումային ծախսերը (850), իսկ զուտ դրամական հոսքերը կազմում են 197 մլն դրամ: Հինգերորդ տարում զուտ շահույթը կազմում է 570 մլն դրամ, իսկ ներդրումային շահութաբերությունը հասնում է մինչև 67%-ի ($570/850$): Երբ զարգացման հավասարակշռվածության գնահատման համար որպես չափորոշիչ կիրառվում է շահութաբերությունը, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ նաև վնասաբերությունը, քանի որ հավասարակշռման համար ելակետային սկզբունք է համարվում անվնասությունը, որը կախված է արտադրանքի վաճառքի ծավալից (Ավ):

$$U_q = U_w / (U_q - \varphi_d),$$

որտեղ՝ U_w – տարեկան կայուն պայմանական ծախսերը, մլն դրամ,

U_q – արտադրանքի միավորի գինը, դրամ,

φ_d – արտադրանքի միավորի փոփոխում ծավալները, դրամ:

Արտադրանքի տարեկան վաճառքի կրիտիկական ծավալը (Ակ) որոշվում է հետևյալ բանաձևով՝ $U_q = U_w / (1 - \varphi_{\partial\sigma} / \varphi_d)$,

որտեղ՝ $\varphi_{\partial\sigma}$ – փոփոխում ծախսերի տարեկան գումարը, մլն դրամ,

φ_d – արտադրանքի վաճառքի տարեկան ծավալները, մլն դրամ:

Տարածքային միավորման հավասարակշռված զարգացման գնահատման չափանիշի (շահութաբերության) ապահովումը, կախված արտադրանքի տարեկան վաճառքի կրիտիկական ծավալից, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{վկ} = \frac{U_{այ}}{1-C} + \left(C - \frac{1h_{ծծ}}{1-C} \right),$$

որտեղ՝ $U_{վկ}$ – արտադրանքի վաճառքի կրիտիկական ծավալը, մլն դրամ,
 C – վաճառքի տարեկան շահութաբերությունը ($C=C/վծ$):

Աղյուսակ 3


Ցուցանիշներ	Ցուցանիշների արժեքը	
	Տարբերակ «Ա»	Տարբերակ «Բ»
1. Տարեկան կայուն պայմանական ծախսերը, մլն դրամ	25.0	56.0
2. Միավոր արտադրանքի փոփոխական ծախսերը, դրամ	70	40
3. Միավոր արտադրանքի գինը, դրամ	120	120
4. Անվնասության կետը, հատ. (տ1/տ3-տ2)	500 000	700 000
5. Վաճառքի կրիտիկական ծավալը, որն անհրաժեշտ է կանխատեսված շահույթի ստացման համար	580 000	742 500
6. Շահույթը, մլն. դրամ	4.0	3.4

Վաճառքի տարեկան կրիտիկական ծավալը ($U_{վծ}$), որն անհրաժեշտ է նախատեսված շահույթի ստացման համար, որոշենք հետևյալ բանաձևով.

$$U_{վծԱ} = (U_{այ} + C) / (U_{գ} - U_{փծ}) = (25 + 4) / (120 - 70) = 580000 \text{ հատ},$$

$$U_{վծԲ} = (56 + 3.4) / (120 - 40) = 742500 \text{ հատ}:$$

Եթե տարածքի միավորման հավասարակշռված զարգացման համար ելակետային չափանիշ ընդունենք արտադրանքի վաճառքի տարեկան կրիտիկական քանակը, ապա հավասարակշռման համար ավելի գերակայելի է «Ա» տարբերակը.



Գծանկար 2. Մարզի հավասարակշռված զարգացման տարբերակների գնահատումը:

Եթե վաճառքի ծավալը կազմի 77500, ապա շահույթի մեծությունը «Ա» տարբերակով հավասար կլինի «Բ» տարբերակի շահույթին: Եթե վաճառքի ծավալը մեծ լինի 77500-ից, ապա հավասարակշռման համար կիրառելի տարբերակ կարող է համարվել «Բ»-ն:

Տարածքային միավորման հավասարակշռված զարգացման համար անհրաժեշտ է հաշվարկել զարգացման դրամական հոսքերի մեծությունը: Ընդունենք, որ միավորման նախագծային զարգացումը ընդգրկում է երեք՝ «Ա», «Բ», «Գ» տարբերակ, որոնք պետք է իրականացվեն երեք տարում: Ընդունենք, որ «Ա» և «Բ» տարբերակների դրամական հոսքերը միմյանցից կախված չեն, բայց «Գ» տարբերակի դրամական հոսքերը կախյալ են: Հավասարակշռված զարգացման նպատակով այդ տարբերակների գերակայելիությունը որոշելիս պետք է գնահատել տարբերակների սպասվելիք դրամական հոսքերը, որոնք առաջանում են տարբեր տարիներին:

Հետազոտությունների արդյունքի վերլուծությունը ցույց տվեց, որ դրամական հոսքերի ամենամեծ ծավալը կարող է ապահովվել այն տարբերակը, որը կարելի է համարել որպես տարածքի զարգացման հիմնավորման բազա: Այդպիսի տարբերակի ընտրության դեպքում պետք է նկատի ունենալ, որ տնտեսության զարգացման հավասարակշռվածությունը, որպես հարաբերական մակարդակ, ենթադրում է վերարտադրության այնպիսի գործընթաց, որը կապված է տեղական բնական ռեսուրսների (ԲՌ), հումքային ռեսուրսների (ՀՌ) և ներդրումային մեթոդների (ՆՄ) օգտագործման պահանջարկի ավելացման հետ: Դրանք հիմնավորելու համար վերլուծենք և բացահայտենք մարզի զարգացման հավասարակշռվածության գործոնային կախվածությունը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Մարզի զարգացման հավասարակշռման գործոնային կախվածության հաշվարկը

Տարիներ	Գործոնների մասնակցության մակարդակը			Գործոնների հանրագումարը (u2+u3+u4)	Հավասարակշռվածության կախվածությունը (1-u5), գործ
	Բնական ռեսուրսների (ԲՌ) գործ	Հումքային ռեսուրսներ (ՀՌ) գործ	Ներդրումային ռեսուրսներ (ՆՄ) գործ		
1	2	3	4	5	6
0	0.123	0.120	0.105	0.348	0.652
1	0.150	0.140	0.112	0.402	0.598
2	0.170	0.160	0.117	0.447	0.553
3	0.180	0.186	0.123	0.489	0.511
4	0.210	0.195	0.130	0.535	0.465
5	0.230	0.205	0.136	0.571	0.429

Եթե մարզի զարգացման հավասարակշռվածությունը դիտարկենք ռեսուրսային ապահովվածության տեսանկյունից, ապա կտեսնենք, որ աղյուսակի տվյալների և հավասարակշռվածության ռեսուրսային աճող պահանջարկի համաձայն, մարզի հավասարակշռվածության կախվածությունը բազիսային տարվա նկատմամբ աճել և կազմում է, ըստ բնական ռեսուրսների՝ 1.87 անգամ (0.230:0.123), հումքային ռեսուրսների՝ 1.7 անգամ (0.205:0.120) և ներդրումային միջոցների՝ 1.3 անգամ (0.136:0.105): Աղյուսակ 4-ում բերված երեք տեսակի ռեսուրսների ընդհանուր մակարդակով մարզի զարգացման հավասարակշռվածության ռեսուրսային կախվածությունը բազիսային տարում կազմել է 0.652, իսկ 5-րդ տարում՝ 0.429 կամ կրճատվել է 1.52 անգամ (0.652:0.429): Հավասարակշռվածության կախվածության կրճատումը պահանջում է

թողարկվող ապրանքային արտադրանքի կազմում ավելացնել կոնկրետ ապրանքատեսակների բնաիրային բանակությունը և դրա թողարկման ռեսուրսային ծախսերը:

Այսպիսով, մարզի համաչափ զարգացման համար խիստ կարևորվում են ռեսուրսաապահովման պետական աջակցությունը և նորմավորումը:

Քանի դեռ մարզերի ռեսուրսային ծախսերը չեն կազմում դրա ընդհանուր ծախսերի 70-75%-ը, չի կարելի սպասել մարզերի հավասարակշռված զարգացում: Մարզերի հավասարակշռված զարգացումը ենթադրում է այնպիսի ռեսուրսաապահովում, որը ձևավորվում է սեփական ռեսուրսների հիման վրա և փոխառու միջոցների արդյունավետ օգտագործման միջոցով:

Երկրորդ. հավասարակշռված զարգացումը պահանջում է ապահովել նորմատիվների ստեղծման և օգտագործման ինքնակառավարման համակարգ: Երրորդը. այդպիսի զարգացումը ենթադրում է այնպիսի արդյունքների ստեղծում, որոնց իրացումը պայմանավորվում է մարզերի շուկայացման հարաբերություններով: Չորրորդը. հավասարակշռված զարգացումը ենթադրում է ոչ միայն զարգացման գնահատման չափանիշների համաչափ, այլև այդ չափանիշների կշռված մակարդակների ձևավորում: Այստեղից էլ հետևում է, որ ՀՀ մարզերում սոցիալ-տնտեսական բարեփոխումները պետք է իրականացնել հավասարակշռված զարգացման հիման վրա:

Փորձը ցույց է տալիս, որ մարզերի հավասարակշռված զարգացումը պետք է առաջին հերթին գնահատել զուտ շահույթի և շահութաբերության ցուցանիշներով: ՀՀ զուտ շահույթի կազմում Երևանի տեսակարար կշիռը կազմում է 70,7%, իսկ բոլոր մարզերինը՝ 29,3%, այդ թվում Սյունիքի մարզինը՝ 55,1%, Արմավիրի մարզինը՝ 32,6%¹: ՀՀ 2006թ. զուտ շահույթի 60,7%-ը վերաբերում է Երևանին, 39,3%-ը՝ մարզերին, այդ թվում 88,2%-ը վերաբերում է Սյունիքի մարզին՝ պայմանավորված մարզի հանքագործության բարձր տեսակարար կշռով:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ մարզերի հավասարակշռված զարգացումը պայմանավորվում է նաև արտադրանքի արտահանման և ներմուծման հարաբերակցության դրական սալոյով: 2004 թվականին դրական սալոյով գործել են հիմնականում Լոռու, Կոտայքի և Սյունիքի մարզերը, 2005թ. միայն Լոռու մարզը, 2006թ.՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերը: Այդ տարիներին բացասական սալոյով էր Երևանի բաժինը կազմել է 89% (2004), 49%(2006), իսկ բոլոր մարզերի բաժինը՝ 11% և 9%: Մարզերի զարգացման անհամաչափության պատճառ է նաև խոշոր ձեռնարկությունների արտադրական կարողությունների օգտագործման դադարեցումը, այն դեպքում, երբ դրանց արտադրանքի տեսակարար կշիռը մարզերի բոլոր ձեռնարկությունների թվաքանակում տատանվում է 46,1%-ից մինչև 76,3%, իսկ ՓՄՁ-ինը՝ 23,7%-ից մինչև 53,9%:

Այժմ մարզերի ՓՄՁ-ի զարգացման ուղղությունները ներկայացնենք դրանց գործունեության գնահատման և բնութագրման ցուցանիշներով:

Աղյուսակ 5-ից երևում է, որ բերված ցուցանիշներից 1-ինի հաշվով ամենաբարձր տեսակարար կշիռը կազմում են Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերը, չնայած նրան, որ պետական աջակցության բարձր մակարդակ ապահովել են Լոռու և Կոտայքի մարզերի համար: Պետական աջակցությունը բարձր մակարդակի է հասել առևտրի և արտադրական ոլորտներում, որոնցից առաջինում բարձր մակարդակ են կազմում Արմավիրի, Արարատի մարզերը, երկրորդում՝ Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերը:

¹ Մարզերի մասին այս և մյուս տվյալները վերցված են 2002-2006թթ. «ՀՀ մարզերի տարեգրքերից»:

ՓՄՁ զարգացման բնութագրման չափորոշիչները¹

Ցուցանիշները	Մարզեր									
	Արագածոտնի	Արարատի	Արմավիրի	Գեղարքունիքի	Լոռու	Կոտայքի	Շիրակի	Սյունիքի	Վայոց ձորի	Տավուշի
ՓՄՁ-ի տեսակարար կշիռը մարզի ՀՆԱ-ում, %	47.5	37.0	25.2	53.7	35.7	23.9	40.5	24.9	49.9	41.1
ՓՄՁ-ի թիվը, հատ	2970.0	5487.0	5409.0	5468	726	7911	5807	4877	1548	3562
Մարզի ՓՄՁ-ի տես. կշիռը ՀՀ ՓՄՁ-ի կազմում է, %	3.0	5.5	5.4	5.5	7.1	7.9	5.8	4.9	1.5	3.6
1000 բնակչի հաշվով ՓՄՁ-ի թիվը, հատ	21.0	20	19	23	25	29	21	32	28	27
Պետական աջակցություն ստացած ՓՄՁ-ի թիվը	494.0	414.0	182	552	679	545	433	538	350	417
այդ թվում										
արտադրության ոլորտ, %	30.6	30.6	22.5	21.3	29.0	33.0	32.1	46.2	36.5	39.7
ծառայության ոլորտ, %	19.3	24.3	29.1	29.0	26.2	23.5	24.0	18.8	31.5	21.2
առևտրի ոլորտ, %	43.3	43.9	48.4	43.0	39.9	42.4	35.9	33.3	28.7	38.4
շինարարության ոլորտ, %	6.8	1.2	-	6.7	4.9	1.1	8.0	1.7	3.3	0.7
Վարկային երաշխավորվածության տրամադրման ՓՄՁ-ի թիվը	2	-	12	25	16	5	10	2	6	8
Սկսնակ ձեռներեցության աջակցման ՓՄՁ-ի թիվը				31	19	15	12	12	13	6
Արտադրության աջակցման ՓՄՁ-ի թիվը	23	20.0	14	31	32	20	26	10	9	10
Տեխնիկական աջակցման ՓՄՁ-ի թիվը	423	395	145	426	512	482	323	434	312	348

Վարկային բարձր երաշխավորվածություն տրվել է Գեղարքունիքի և Լոռու մարզերի՝ սնանկ ձեռնարկություններին:

Այսպիսով, բոլոր տեսակի վարկային և տարբեր աջակցությունների համակարգում տնտեսական արդյունավետությունը բարձր մակարդակի է հասել Գեղարքունիքի և Լոռու մարզերում, մարզերի զարգացման պետական աջակցությամբ պայմանավորվել է նաև մարզերի աշխատուժի զբաղվածությունը:

Աշխատուժի զբաղվածությունը գնահատվում է աշխատուժի առաջարկով, որը 2006թ. կազմել է 102 հազ. մարդ, որից Երևանում՝ 12.5, իսկ մարզերում՝ 83.0, այդ թվում Լոռու մարզում՝ 20.0, Շիրակում՝ 20.0 և Սյունիքում՝ 11.0: Աշխատուժի զբաղվածության ընդհանուր թվաքանակում արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում է 12.9%, գյուղատնտեսությանը՝ 46.0%, ծառայություններին՝ 9.1%: Արդյունաբերությունում զբաղվածության համեմատաբար

¹ ՓՄՁ-ի 2006թ. տարեկան հաշվետվություն:

բարձր տեսակարար կշիռ ունեն Լոռու (11.6%) և Կոտայքի (26.9%) մարզերը, նվազագույն մակարդակ ունեն գրեթե մյուս բոլոր մարզերը: Ընդհանուր զբաղվածների (2006) 19.5%-ը գտնվում է պետական հատվածում, իսկ 80.5%-ը՝ ոչ պետական հատվածում: Այդ ցուցանիշները կազմում են՝ Երևանում՝ 46.9% և 22.9%, իսկ մարզերում՝ 53.1% և 77.1%¹:

Այսպիսով, մարզերի զարգացման միտումների հետ մեկտեղ, դրանց ուսումնասիրությունների և կատարված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով՝ մասնավորապես ռեսուրսների, ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, մարզերի կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորման հետ կապված խնդիրներով:

Մարզերի զարգացման հիմնախնդիրները պայմանականորեն կարող են դասակարգվել ըստ օրենսդրական, ռեսուրսային, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնների, որոնք իրենց ազդեցությունն ունեն թե՛ սկսնակ և թե՛ գործող ձեռնարկությունների գործունեության վրա:

Մարզերի համաչափ զարգացմանը խոչընդոտող օրենսդրական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում դրանց և պետական մարմինների միջև փոխհարաբերություններին, որտեղ դեռևս առկա են մի շարք վարչարարական բնույթի-խնդիրներ, որոնք մասնավորապես կապված են ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների ներկայացման բարդեցված ընթացակարգերի, տնտեսավարող սուբյեկտներում ստուգումներ իրականացնելու հաճախականության փաստերի հետ:

Մարզերի համաչափ զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը: Այս ենթատեքստում խիստ կարևորվում են տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են մարզերի կառավարման, շուկայավարման և աշխատուժի զբաղվածության հարցերը: Այդ առումով նոր աշխատատեղերի ստեղծման և բնակչության բարեկեցության բարձրացման հիմնական աղբյուրներից մեկը նոր գործարար նախաձեռնություններն են: Ներկայիս փուլում ամենակարևոր խնդիրներից է մարզերի հավասարակշռված զարգացման համար պետական աջակցության հստակ մեխանիզմների մշակումը:

Այսպիսով, կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում կարելի է ներկայացնել մարզերի հավասարակշռված զարգացման հետևյալ առաջարկությունները, որոնք առանձնացվել են չորս հիմնական խմբերի միջև:

Առաջին խմբում նպատակահարմար է ներառել մարզերի զուտ ակտիվների և զուտ դրամական հոսքերի աճի ցուցանիշները, զուտ դրամական հոսքերի ձևավորման հիմնական ուղղությունները:

Երկրորդ խմբում կարող են ներառվել մարզերի երկարաժամկետ ներդրումները, արտադրության եկամտաբերությունը, արտադրական ծախսերի և արտադրանքի իրացման հարաբերակցությունը:

Երրորդ խմբում կարելի է ընդգրկել մարզերի զուտ շահույթի և շահութաբերության, արդյունք / ծախս, արդյունք / կապիտալ ամփոփ ցուցանիշները:

Չորրորդ խմբում պետք է ընդգրկել մարզերի աշխատուժի առաջարկը, զբաղվածությունը և ներդրումների բաշխումը՝ ըստ մարզերի արտադրական հատվածների:

¹ ՀՀ մարզերի «Տարեգիրք» 2006թ.: